ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «14» հոկտեմբեր 2026թ № 2079-Ա

«ԳԱՐ-ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով համապատասխանության գնահատման մարմինների նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբի 2026 թվականի հուլիսի 13-ի աշխատանքային հանդիպման արձանագրությունը՝

Հրամայում եմ

1. «ԳԱՐ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 035/S-066) անբաժանելի մաս հանդիսացող հավատարմագրման վկայագրի N 1, N 2 և N 3 հավելվածներում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում ընդգրկված արտադրանքի/օբյեկտի անվանման, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրի, արտադրանքի/օբյեկտի նորմատիվ իրավական ակտի, ստանդարտացման փաստաթղթի նշագրի, անվանման, արտադրանքի/օբկեկտի համապատասխանության գնահատման ձևի և սխեմայի:

2. «ԳԱՐ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակել մինչև հավատարմագրման վկայագրի գործողության ժամկետի ավարտը (2030 թվականի հունիսի 25), շնորհել նշանակման վկայական և նույնականացնող համար՝Ն-58 (H-58) 2026:

3. «ԳԱՐ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել «ԳԱՐ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակման ողջ

ժամանակահատվածում ապահովել գործող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայությունը:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

2026-07-22 16:18:27 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2026 թ.
_____ ____-ի N _____-Ա հրամանի

ՑԱՆԿ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 827 որոշմամբ ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների անվտանգություն» Մաքսային Միության տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 014/2011):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ (ՀՀ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին, ցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1136-Ն որոշում:
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 607-Ն որոշում: